Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԵԾ ՊԱՀՔԻ ԵՐՐՈՐԴ՝ ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻԻ ԱՌԻԹՈՎ

(24 փետրվարի, 2013թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո»:
(Ղուկ. ԺԵ. 21)

Սիրելի քույրեր եւ եղբայրներ,

Այս խոսքերը քաղված են Ղուկաս Ավետարանչի՝ Քրիստոսի հոտին ներկայացրած այն պատումից, որն ապրվածաշնչյան մեկնիչներն անվանել են «Անառակ որդու առակ»: Առակ, որը շատերին քաջ հայտնի է, առակ, որի պատգամին մենք ունկնդրում ենք Մեծի Պահոց յուրաքանչյուր երրորդ կիրակի օր:

«Մի մարդ երկու որդի ուներ, - պատմում է Ավետարանիչը: Որոշ ժամանակ անց կրտսեր որդին մոտենում է հորը եւ խնդրում. «Հա՛յր, տուր քո ունեցվածքի ինձ հասանելիք բաժինը, որպեսզի ես առանձնանամ եւ իմ կյանքով ապրեմ»: Հայրը կատարում է կրտսեր որդու խնդրանքը. փոխանցում է իր, ունեցվածքի այն մասը, որը բաժինն էր կրտսեր որդու: Եւ Ավետարանիչն ասում է՝ կրտսեր որդին վերցնելով իր ունեցվածքը, մեկնեց օտար աշխարհ: Թե նա որքան ապրեց օտար աշխարհում, հստակ չի նշվում Ավետարանում: Բայց որոշ ժամանակ անց նրա ունեցվածքը, կարողությունները սպառվում են, եւ նա ստիպված վարձկանությամբ է հայթայթում իր ավուր հացը: Եւ Ավետարանչի խոսքերով խոզերի համար կերակուրներն են մինչեւ անգամ նախընտրելի դառնում նրան սովի պատճառով: Այստեղ այս միտքը լուսավորվում է, եւ ինքն իրեն հարց է ուղղում. «Անգամ ստրուկները, անգամ ծառաներն իմ հոր օջախում ավելի լավ են սնվում, ավելի ապահով են, ավելի հանգիստ են, քան ես: Ինչո՞ւ օտար աշխարհում ես պիտի խոզերի համար նախատեսված կերակուրներով ապրեմ, ինչո՞ւ այսքան օտարացում, ինչո՞ւ հեռացում, մի գուցե վերադառնա՞մ իմ հայրական օջախ եւ կարողանամ վերականգնվել»: Այս որոշումը որդին ի գործ է դնում. վերադառնում է ընտանիք եւ բարեբախտաբար հայրը նրան ընդունում է գրկաբաց, որովհետեւ, Ավետարանի խոսքերով, կորսված էր այդ որդին եւ գտնվեց, մահացած էր եւ հարություն առավ: Ահա այստեղ է, որ որդին հնչեցնում է բնաբանի մեջ քիչ առաջ բերված խոսքերը. «Հա՛յր, մեղանչեցի քո դեմ եւ երկնքի առաջ»: Ջղջման, խորը զղջման, խորն ափսոսանքի, խորն ապաշխարանքի արտահայտություն: Եւ ասում է Ավետարանը, որ Հայրը զվարակ մորթեց, խնջույք կազմակերպեց եւ արտահայտեց իր անասելի ուրախությունը:

Այս է, սիրելի քույրեր եւ եղբայրներ, առակի բովանդակությունը:

Աստվածաշունչը, ինչպես բազմաթիվ մեկնիչներ բազում անգամներ հայտարարել են, ներկայացնում է Աստծո ներգործությունը մարդկային պատմության մեջ, Աստծո գործոնը մարդկային հարաբերություններում. Աստված երկու հստակ պատգամ փոխանցեց մարդկանց: Առաջին՝ մարդը, որպես Աստծո ստեղծած արարած, պետք է ամբողջանվեր կերպով նվիրվի, սիրի իր Արարչին: Աստվածասիրությունն է առաջին պատգամը:

Երկրորդ՝ մարդը պետք է սիրի իր նմանին, որովհետեւ նա եւս ստեղծվել է այն Արարչի կողմից, Որն իրեն արարեց: Այսպես կյանքի կոչվեց մարդասիրությունը: Եւ մարդասիրության կարեւորագույն բաղադրիչներից մեկը, եթե ոչ ամենակարեւորը ծնողասիրությունն է: Աստվածաշնչի դասնաբանյա պատվիրաններում աներկբա եւ անժխտելիորեն հայտարարվում է. «Պատվի՛ր հորդ ու մորդ» (Ելք Ի. 12): Ծնողի հանդեպ սերը եւ հարգանքը երկվություն չի ենթադրում Աստվածաշնչում: Այսուհանդերձ, սակայն, Ավետարանի մի դրվագում Քրիստոս հայտարարում է. «Ով չթողնի իր հորը, ով չթողնի իր մորը եւ վերցնի խաչը ու ինձ հետեւի, արժանի չէ ինձ»: Այստեղ մենք մի պահ դադարումների մեջ ենք հայտնվում: Ինչպե՞ս կարելի է համադրել մի կողմից ծնողին սիրելը, պատվելը, եւ մյուս կողմից ծնողին մերժելը հանուն Հիսուսի հետեւից գնալու: Բայց այս հակասությունը, հակադրությունն ընդամենը րոպեական է, արհեստական, երեւութական: Աստված ասում է. «Կարեւորագույն արժեքը աստվածասիրությունն է, կարեւորագույն արժեքը Աստված է»: Եւ եթե ծնողների նկատմամբ դրսեւորված վերաբերմունքը կարող է չեզոքացնել մարդկանց հարաբերությունն Աստծո հետ, պետք է մերժել նաեւ այդ հարաբերությունները:

Մեր ժողովրդի պատմության մեջ բոլորդ կհիշեք այդպիսի դրվագ, որն անմահացրել է Ռաֆֆին: Սամվելի կերպարը գրեթե բոլորին է ծանոթ, որն Աստծու, աստվածային արժեքների, հայրենասիրության համար մերժեց, անգամ ծնողասպանության դիմեց: Բայց այս կերպարն ընդհանրացել է այն պատճառով միայն, որ այդ հանցագործությունն իսկապես կապարվեց ազգային արժեքները, հոգեւոր արժեքները, Աստծու կողմից տրված պատվիրաններն ու պատգամները անխաթար պահելու համար: Բայց այլ է անառակ որդու պարագան: Այստեղ մեկնիչները միանշանակորեն ասում են, որ այն անձը, որից հեռացավ կրտսեր որդին, ոչ այլ ոք է, քան Ինքն՝ Աստված: Հայրը այստեղ ներկայանում է Աստծո այլաբանական կերպարով: Եւ, բնականաբար, որքան անընդունելի, որքան զզրելի պիտի լինի Աստծուց ինքնին հեռանալը եւ Աստծուն ուրանալը:

Հետաքրքիր է, որ «Անառակ որդու առակում» տեսանելի է երկու դրվագ: Առաջին՝ փախուստ դեպի ազատություն, եւ երկրորդ՝ փախուստ ազատությունից: Կրտսեր որդին կարծում էր, որ պատասխանատվությունից, հոգսերից, բեռից զուրկ նոր աշխարհ ու կյանք փոխադրվելով ավելի ազատ եւ անկաշկանդ պիտի լինի: Հոգեբանորեն նա արդեն տանից հեռացած էր անգամ այն ժամանակ, երբ տակավին այնտեղ էր բնակվում, նա օտարացել էր այդ միջավայրից, նրան անտանելի էր թվում այն միապաղաղությունը, միօրինակությունը, որն ինքը տեսնում էր հայրական օջախում: Եւ իր համար կարծեք թե նախընտրելի էր ամեն մի ցնցում, բայց ոչ այդ միօրինակությունն ու միապաղաղությու-

նը, որովհետեւ նա վաղուց արդեն հոգեբանորեն դուրս էր եկել այդ միջավայրից, հաղորդ չէր հայրական օջախի արժեքներին, միջավայրին, ընկալումներին, ըմբռնումներին: Եւ այս հոգեբանական մղումը իրեն տարավ օտար աշխարհ: Պատահական չէ, որ Ավետարանիչն ընդգծում է օտար աշխարհ արտահայտությունը: Այդ աշխարհն օտար էր ոչ միայն, որ անծանոթ էր, այլ օտար էր իր արժեքներով, ընկալումներով, հարաբերություններով: Նա հայտնվեց մի միջավայրում, որտեղ չկային Աստծու նկատմամբ այն ընկալումները, ըմբռնումները, նվիրումը: Մարդիկ հակված են երբեմն-երբեմն փախուստ տալ իրական այն կյանքից, որը գոյություն ունի: Այդպես փախուստ տվեցին իսրայելացիները անապատում Աստծուց եւ հակվեցին կռապաշտությանը եւ ոսկե հորթին պաշտամունք մատուցեցին: Այսօր նաեւ շատերը փախուստ են տալիս իրականությունից, հայրական օջախից՝ պարզապես միապաղաղ, միատեսակ, ճնշող ազդեցությունից խուսափելով: Այսօր գոյություն ունեն աղանդավորական զանազան տեսակներ, կլինեն դրանք հոգեւոր թե քաղաքական աղանդներ, եւ մարդիկ երբեմն ձանձրույթից, միապաղաղությունից, միօրինակությունից եւ Աստծու հետ հաջողված չլինելու անվստահությունից երբեմն հակվում են այս կամ այն աղանդավորական հոսանքին: Նորից եմ կրկնում, կարեւոր չէ՝ այդ հոսանքը կրոնական է, քաղաքական, թե տնտեսական: Բայց այդպիսի հոսանքներին հարելու միակ պատճառը անվստահությունն է, սեփական արժեքների մեջ ամուր չլինելու իրողությունը:

Երկրորդ դրվագը, որ ընդգծվում է «Անառակ որդու առակ»-ի մեջ, փախուստն է ազատությունից: Բոլորս փախչում ենք դեպի ազատություն, ձգտում ենք ազատության եւ տեսնում ենք, որ հաճախ այդ ազատությունը իսկական փորձանք է դառնում մեզ համար: Ազատությունը, որ խարսխված չէ արժեքների վրա, ազատությունը, որ Աստծու հետ միության մեջ չէ կայանում, իրապես փորձանք է եւ այդ փորձանքից փրկվել՝ միայն մնում է զղջումը:

Իրականում ինչ արեց անառակ որդին: Շատ հետաքրքրական է, որ նա այդ ինքնահաղթահարումը իրագործեց: Առաջին հայացքից թվում է մեխանիկական մի գործողություն՝ լքել ընտանիքը, մտափոխվել եւ վերադառնալ: Բայց չափազանց դժվար է սեփական կերպարից, գործելառճից եւ սխալներից հրաժարվելը նշանակում է ինքդ քեզ հաղթահարես: Եւ այդ վճռականությունը, այդ քաջությունն ունեցավ անառակ որդին. ունեցավ՝ ինքն իրեն հաղթահարելով, առանց վստահություն ունենալու, որ ներման կարժանանա: Բայց ներողամտության արժանանալու հիմնական գրավականը զղջումն է: Եւ այդ զղջումը, այդ ապաշխարանքն ունեցավ կրտսեր որդին:

Հարց է առաջանում՝ ինչ առընչություն ունի «Անառակ որդու առակը», ընտանիքից փախուստը, ընտանիք վերադառնալը Մեծի Պահոց այս շրջանի հետ: Վստահ եմ պատասխանը այնչափ ակնհայտ է, որ անհրաժեշտություն չկա նույնիսկ լուսաբանելու: Մենք բոլորս, որպես մարդիկ, անկումների եւ վերելքների ճանապարհ ենք անցել: Բոլորս կյանքի ինչ-որ մի հատվածում անառակ որդի ենք: Մարդիկ հակված են սխալվելու, ընկնելու, բայց Ավետարանը մեզ պատգամում է, որ Մեծի Պահոց շրջանում եւս մեկ անգամ խորհենք մեր ընթացքի մասին: Խորհենք, որ հակառակ անկումներին, պատ-

բաստ եւ վճռական լինենք նաեւ ոտքի կանգնելու: Ինչպես մի մտածող ասում էր. «Ես չեմ սիրում այն ձեռքերը, որոնք մշտական ճերմակության մեջ են, այլ սիրում եմ այն ձեռքերը, որ ցեխի մեջ աղտոտվելուց հետո պահպանում են ճերմակությունն եւ մաքրությունը»: Մենք մարդկային հարաբերությունների մեջ ամեն օր կեղտոտվում ենք, աղտոտվում, բայց ամեն օր նաեւ մեզ չպիտի լքի ջանքը՝ այդ ցեխից, այդ աղտոտությունից ազատվելու: Իսկ անմաքրությունից ազատվելու միայն մեկ ճանապարհ կա՝ հաղթահարել սեփական անձը: Հպատակեցնել սեփական անձը աստվածային պատգամներին եւ պատվիրաններին: Եւ Մեծի Պահոց այս շրջանը այդ հպատակեցման եւ հնազանդեցման ոգին է, որ ներշնչում է այսօր մեզ:

Թող Աստված Իր Սուրբ Հոգով զորացնի մեր մեջ հնազանդության, հաշտության, բարեպաշտության եւ Աստծու հանդեպ մշտական սիրո մեջ ազատության հասնելու ոգին:

Շնորհք, սեր եւ խաղաղություն մեզ բոլորիս հետ այժմ եւ հավիտյանս հավիտենից. ամեն: